

քաջութեամբ նահատակութիւննին, և այլն, այս ամէնը միայն Սոփերըն գիտենք. որովհետեւ փարպեցին, իբրեւ պատմիչ՝ աւելի ընդհանուրին մտադիր, գտնց կ'ընէ յեշտատակել մասնական և առանձին զէպքերը: Բայց, եթէ ուզենք արդիւրը բնիկ Սոփերըն յիշած այդ մանրամասնութեանց, կամ այն է որ՝ ժողովրդեան աւանդութիւնն անոնում են, և կամ մեծաւ մասամբ հետեւութիւններ կամ ներշնչումներ են նմանօրինակ վկայաբանութեանց կամ զէպքերու ինչպէս, օրինակ իմ, Աստմայ երեցած տեսիլն՝ շատ կը նմանի՝ մրցանելի մրգպետին երեցած տեսիւն, որ կը պատմուի Եղիշէի մօտ². այն տեղ «լոյս կամարածու փայլեալ ի վերայ ամենեցուն», այս տեղ «յանկարծակի տունն լի եղեւ լուսով». այն տեղ կ'երեւի «այր մի լուսաւոր զգեստիւր և ահաւոր տեսլեամբ. . . տեսիլ սքանչելի երեւեալ», այս տեղ կ'երեւի «սանդուղք լուսեղէնք. . . և զունիք զօրաց ելանէին ի վեր, և էր ամենեցուն տեսիլն. . . ահաւոր և սքանչելի». այն տեղ «բաշխէր պսակս բոլորեալս ի կարմիր վարդէ», այս տեղ «ունէին ինն պսակ ի ձեռնին», և այլն. իսկ միւս զէպքն, որով Հայոց գնդէն մին՝ դեղեկելով իւր հաւատարին վրայ՝ կը փախչի և կ'ուրանայ զբրիտանոս, և փոխանակ անոր՝ պարսիկ մի կը զանալ զբրիտանայ և նահատակուելով վկայից թիւը կը լրացնէ, կը յիշեցնէ մեզ Սեբաստիոյ քառասուն մանկանց վկայաբանութեան բազանեպանք. և այլն:

Խօսքերնիս կը վերջացնենք հոս, այն եզրակացութեան յանգեալով, թէ Աստմանց նահատակութեան մասին, ինչպէս կը զբառենք պատմուած Սոփերըն Եթէ հատորին մէջ, մեր պատմիչներէն ոչ միոյն մէջ չի գտնելով մ և է յայտնի յիշատակութիւն մը կամ ակնարկութիւն մը, և ընդհակառակն միայն փարպեցւոյ պատմութեան մէջ յիշուած գտնելով Աստմ գնունի, — որ որիչ է միւս մեզի ծանօթ և վարդանանց պատերազմին

մահակցոյ Աստմ գնունիէն, — և իրեն զխաւար ընկերները, և երկու զէպքերուն էական պարագայից մէջ աշբի դարձող հակասութիւններ չգտնելով, կը հետեցնենք հաւանօրէն, թէ մեր եկեղեցւոյ մէջ սօնուած և յոտուկ շարականով եւս պատուած Աստմեան զօրավարը՝ նոյն են փարպեցւոյ պատմութեան մէջ յիշուած և վահանեանց նիդակակից համանուն զօրավարաց հետ:

Հ. ՅՈՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ

Հ Ա Ն Ք

ԵՒ ԻՐԵՆԵ ՍՏՈՒԳՐԱՒԱՆՈՒԹԻՒՆՆ

(Շար. տես էջ 103)

Ծովաբերիւղ

Ա.Վ.ԻՐԵՆԵ Aigue marine բառին՝ վերջերս հրատարակուած ուսումնական զբոյ մը մէջ, կը գտնենք սեփականուած զանազան բառեր, այսինքն Ծովակիմ, Ծովաբերիւղ, բառ ոմանց Գոմազով, Վապուտակ, Բիրեղ, Թալիշ, Ծովաշուր, Ալաբան հոմանիշներ չափազանց են, և նոյն իսկ ստոնցմէ պմէն զգ. բառն անխալ հոմանիշ ընդունեն սխալ է: — Տիրել հոմանիշներէն միայն երկու առաջինը նորակազմ են, այլք հին. Շատ տարիներէ ի վեր՝ նոյն զգ. բառն Վապուտակ անուամբ կոչուած է, և ոչ թէ ի նախնայ չէ այս սեփականութիւնը, այլ Մեծարգոյ Վ. Հ. Գալուսոյ գիտան է: Կը կարգաւոր իւր բառարանին մէջ. «Առ նախնիս Վապուտակի եղեալ է փոխանակ յունական, Ψάλλω բառն (Եւք. ԻԸ. 16), զոր այսու Թարգմանեն յալկիմթ, մանաւանդ ի դաս զօրեղիւնաց: Այլ եւ զակն Վապուտակ կամեցայ սեպհա կանել Aigue marine անուանեալ ական, զոր ի հումն առ նախնիս մեր չիոթէին ընդ քիլիւղ (béryl) ական, որ է հանք նոյնատեսակ, և կարգութեամբ գրեթէ նոյն. . . »: Իայց այս սեփականութիւնը ոմանց ընդու-

1. Անդ. էջ 75-76:

2. Եղիշէ. 285:

1. Բառագիրք գիտութեանց 1891 էջ 321.

նիւի չեղաւ¹, աւարկելով որ «այս գլ. (aigue marine) բառին դիմաց կապուտակ գնեց, ներքին չէ, քանի որ կապուտակը միւթ մըն է և ոչ քար»։ Անհիմն չէ Մեծարգոյ քննադատին դիտողութիւնը, բայց թէ կապուտակ բառն աններքին է նոյն գլ. բառին սեփականեցնել² այդ կարծեաց համարան չենք։ Առ նախնիս կապուտակ բառն իբրեւ հանք չէ գործածուած, այլ իբրեւ նիւթ կամ ներկ կազդագոյն (ծովագոյն)։ և շատ տեղ ի Ս. Գիրս փոխանակ կազդագոյն կամ ծովագոյն գրելու, կը գնեն «իբրեւ գոետիլ ականց Թարշի³», և Թարշին կը Թարգմանուի ծովորով ծովագոյն, և Aigue marine հանքն կապուտակը ըլլալով, շատ պատշաճ կը տեսնենք կոչել զայն կապուտակ և նաեւ Թարշի⁴ ընդունելով իբրեւ ծովագոյն կամ կապուտակ չէնք հանք մը։ — Վերոյիշեալ համարին ընդ ծովալուր բառն, է զուտ Թարգմանութիւն Իս. Aqua marina համանիշին. այդ բառն տարիներ առաջ Թարգմանուած կը տեսնենք բառարանի մը⁵ մէջ։ Սենյարմար բառեր չեն նորակազմ ծովակն և ծովալիւրդ համանիշներն։ Գոծագմ⁶ բառն սխալ է Aigue marine բառին սեփականեցնել. նոյնպէս նաեւ ճիշդ չէ նոյն բառին սեփականել Քլորիդ բառն որ ունի իրեն յասուկ եւրոպական բառը⁷։

Ծովափրիուր

Ծովափրիուր բառն նոր կազմուած է, և զուտ Թարգմանութիւն, գլ. Ecume de mer համանիշ բառին։ Քիմիական անունն է Magnésite Մագնէտալար [այսպէս կը կոչուի, վասն զի հանքը մագնէտիս կը բովանդակէ]։ Մի քանի տարի առաջ սոյն բառն կոչած ենք Փրիւրալար⁸, և զուցէ աւելի հայնակ համարուի։ Կրնանք կոչել նաեւ Շողալար, Հոմանիշներն են Փրիուր ծովու, Շողիք ծովու բառերն որ կը գտնուին ի բառագիրս։ Առաջին համանիշն այսինքն Ծովափրիուր կազմած է նորայր։

Միւսականտ

Փերմ. Flussspah բառին կէսն տառադարձելով, կազմուած է Ծորապալթ բառն⁹. Փղ.

բառն է Spathfluor (Spath—Սպաթ, fluor—ծորին), զոր Հ. Քալուենի վարդապետն կոչած է Ծորմարար։ Այս բառը զուտ տառադարձութեամբ կոչուած է նաեւ Փորրապալթ Flussspath, կամ Փորիլա Fluorine։ Մեզ աւելի Ծորմարար և Փորիլա բառերն ներդաշնակ երեւնալով, քան միւս համանիշը, աւելի գործածելի կը համարինք։ Մեր հանքաբանութեան մէջ լատագոյն համարած ենք այդ եւրոպական Fluorine համանիշը կոչել Ծորիլա։

Մորիլ

Մորիլն բառն կազմած է Հ. Քալուենի վարդապետն, և Թարգմանած է գլ. Fluore բառն, որ կը ծագի Լատ. Fluere—ծորել բայէն։ Ոմանք նոյն եւրոպական բառը վանազան կերպով տառադարձեր են և կոչած Ֆլուր¹⁰, Ֆլուր¹¹. Իսկ Հ. Գուրգէնեան վարդապետն մեր կոչած է Փոր և լատ գլ. Phthore համանիշին¹² Փթոր¹³։ Այս ամէն համանիշը, որք թէեւ ի նախնեաց կազմուած բառեր չեն, բայց ներդաշնակ են և ընտիր։ Եւ մենք անոնց մէջ լատ կը համարինք զոր ծածել Ծորիլն համանիշն որ զուտ Հայնակ յորջորջումն և կազմութիւնն ունի և ոչ միւսնեւ բառն մուրացածոյ և ստար Հնչումն։

Կալմիւն

Այս անուամբ գրեթէ առ Հասարակ Եւրոպական ամէն լեզուով կոչի Հերման և Սթրոմէյըր գիտնականաց 1818ին գտած մետաղական պարզ մարմին մը։ Կալմիլոն բառն տառադարձութիւն է Լատ. Cadmium [լն. χαδμειν] նոյնանիշ բառին. գերմ. Cadmium, անգլ. և գլ. Cadmium, Իտ. և սպն. Cadmio։ Մեզ ծանօթ շատ մը ուսումնական գրոց և բառագրոց Հեղինակը¹⁴ միաձայն մի և նոյն կերպով տառադարձեր են այս բառը, միայն Յ. Ս. Վաշանեան¹⁵ կոչած է Զալմիլոն։

Կանթնալաւարդ

Անթափանց Հասարակ դաւարդ մը՝ այս անուամբ կոչած ենք¹⁶ և բառն Թարգմանու-

1. Հմտ. Հանքաբանութիւն Վենեան, էջ 78։
2. Եղչ. Ա. 16։
3. Բառարան Իտ. Հայ. 1804. Վենետիկ։
4. Հմտ. Բիւրեղ, Քազմակեպ 1899. էջ 153։
5. Հմտ. Հանքաբանութիւն Վենետիկ 1898. էջ 52։
6. Հմտ. Հանքաբանութիւն էջ 53։ Վենեան 1897։

7. Հմտ. Սկզբունք Քիմիական գիտութեան։ Կ. Պոլսո. 1853։
8. Հմտ. Գործարական Քիմիա. Վենետիկ 1856։
9. Հմտ. Քազմակեպ 1853. էջ 60։
10. Հմտ. Սկզբունք քիմիական գիտութեան։
11. Հմտ. Հանքաբանութիւն Վենետ. 1898։

թիւն է իւր. Quartz = գաւալիզ, latteo == կալթնալիզ, նոյնանիշ բառին: Այս նորակազմ բառին եւրոպական Հոմանիշն է նոյն իսկ Հայերէն բառն կը պակսի մեր բառարաններէն և ուսումնական գրքերէն:

Կալթնալին

Այլ քանի տարի առաջ մեր Հանքաբանութեան մէջ՝ այս անուամբ կոչած ենք կաթնազոյն արեւակ Հանքն: Իսկ Մեծարգ. Հ. Մէնզլի, Կենդանի Հանքաբանութեան մէջ՝ բառի իբր Հոմանիշ գտած ենք Կալթնալ բառն, որ է գզ. Opale = Ուպալ latteuse = կալթնալիզմ՝ նոյնանիշ բառին կէս թարգմանութիւնն է կէս տառադարձութիւնն: Այս երկու նորակազմ Հոմանիշ բառերու գործածութիւնը կը թողունք գիտնականաց ճաշակին և ընտրութեան:

Կալլիում

Կալլիում անուամբ կոչի 1878ին գտնուած մե. տաղական պարզ մարմին մը, (Բաւո տառադարձութիւն է. լա. և գզ. Gallium նոյնանիշ բառին, զոր Հ. Քալուշի վարդապետն կը տառադարձէ Գալլիում):

Կալկիում

Նիւթական և զոտ տառադարձութիւն է լա. և գզ. Calcium նոյնանիշ բառին: Այս բառը կը գտնուի Հ. Բարսեղ Վ. Նուրիճանեանի ֆիզիզա գրքին մէջ՝ որ ըստ մեր կարծեաց՝ բոլորովին աւելորդ է, քանի որ շատ տարիներ առաջ այդ եւրոպական բառին իբր Հոմանիշ ունեցած ենք (Բնակիր¹ բառն, որ շատ ներդաշնակ է և լաւ կազմուած է: Ս. Վաշանեան կոչած է Քալսիում, որ նոյնպէս եւրոպական բառին տառադարձութիւնն է: Հ. Քալուշի վարդապետն այս երեք Հոմանիշ բառերէն է ոչ մին կ'ընդունի, և անոնց տեղ կը կազմէ Կրածիմ բառն. և ինչ պտտահառա այս նորութիւնը կը ստիպուի ընդուն, զայն յետագայ երկոտողին կը մեկնէ. «է մեռող տարածեալ յոյժ ի բնութեան, այլ գտանի միշտ բաղադրեալ, և մայր ամենայն կրային քարանց (calcaires), ոյր վասն կոչեցաք ի մեղ Կրածիմ»:

այս տնտեղի մեկնութիւնն չէ. որով իւր կազմած բառն մեզ ունեւէ կ'երեւի զարմացականի արժանացնել: Անորամբանն չէ՝ զարմեալ նոյն Հանքն Կրածիմ կոչել, այսու՝ որ երբ Հանքն բացթողալ մնայ, կը թթուակի և կը փոխարկի ի մարած կիր, որով կիր կը ծնի և ըստ այնմ՝ շատ իրաւացի է Կրածիմ կոչել, քան թէ օտարէն փոխառեալ Կալլիում բառն գործածել:

Կայծ

Կայծ բառը մեր Նախնեաց Հին Թարգմանութեանց և գրոց մէջ զանազան Հանքերու հետ կը շփոթուի: Կը Համարուի նոյն ընդ Սուտակ. «Կայծն կոչի Սուտակ, նման է կրակի կայծի»։ Տօնակ, «Սուտակն կարկէ, Հանն է. և յականցն գիրքն կայծ ափ»։ Վրդթ. ԾԾ. Ուրեմն Կայծ բառին Հոմանիշ են Սուտակ և ԿարկէՀան բառերն: Բայց Քալուշի վարդապետն այս երեք բառերն ալ՝ կը սեփականէ երեք զանազան Հանքերու, իւր բառարանին մէջ կը գրէ. «Առ նախնիս մեր ականքն Սուտակ, Կարկէման և Կայծ շփոթին ընդ միմեանս և մի Համարին... բայց ես գրառն Կարկէման սեպակականցի եւրոպական Rubis անուան, Գնտակ անուան Grenat, և Գկայծ անուան Escarboucle կամ Carboncle»:

Ի Ս. Գիրս³ կը կարդանք.

«Իւ կարգն երկրորդ՝ Կարկէման և շափիզա և յասպին»։ Իսկ յոյն.

«Και ὁ στέχος ὁ δευτερος· ἄνθραξ, καὶ σάπφειρος, καὶ ἱάσπης»։ Գալով Վաշկադաշի, կը գրէ.

«In secundo Carbunculus, sapphirus, et jaspis»։ Փաղ. ընտիր Թարգմանութիւն մը, այս պարբերութիւնը կը Թարգմանէ.

«Au second, un escarboucle, un saphir et un jaspe»։

Այս պարբերութիւններէն կը տեսնենք՝ որ նախնիք կարկէՀան կոչած են յն. ἄνθραξ, (երբ. ԴՅՃ սօֆէզ), որ ըստ Ս. Գրոց Հմուտ մեկնաց՝ կայծատետիւ Հանք մ'է. և մեր նախնիք՝ ինչպէս վերը յիշեցինք, Կարկէման և Կայծ նոյն Համարեով, փոխանակ Կայծի, ԿարկէՀան Թարգմանած են: Ան. Ներակացի՝ Կայծը կոչած է Կայծակն և գոյնը «Կայծա-

1. Հմա. Բագմալիկ 1853. էջ 59:

2. Հմա. Հանքաբանութիւն Վիեննա 1897:

3. ՆԸԲ. ԻԸ. 18:

տեսիլ լուսաւոր » . Կայծ բառը զդ. Escar-
boucle բառին սեփականելն սխալ չէ , վասն
զի նոյն հանքին յատկութիւնը կը ցուցնէ :
Ս. Գրքի մեկնիչ մը կ'ըսէ որ , Escarboucle
մեծ Կարկեհան մ'է , նոյն իսկ գիշեր ատեն
կը հառադայթէ . և բուն կարկեհանէն աւել
լի յողողուն է : Ոմանք (ինչպէս Boëtius և
Boot) ի Ս. Գիրս յիշուած յն. ἀσθραξ բառն
բոլորովին կարկեհանի (Rubis) հետ նոյն կը
համարին : Բայց այժմ նոյն բառն սեփակա-
նուած է կարկեհանի մի տեսակին : — Կայծի
պարսիկ և թուրք բառն կը համարուի عسکر
= շէպէրաղ :

Հ. Ս. ԵՐԵՄ.

Շարայարելի

1. Հմմտ. Գիրք Ականց . էջ 48 . « Եւ այսպէս
առնե թէ ի ժամանակ ինչ Եսգուլթ մի եղեալ
է շէպէֆրոնդ , զոր քննիչայի կոչէին , որ ի գի-
շերի որպէս հրազ վառեր , և Շէպէրաղ Կիւ-
հէրին առուցիւնն յայնմանէ է » : Գեռ աւելի
պատմական տեղեկութիւն կու տայ , զոր աւել
լորդ կը համարինք յիշելու :

Հետաքրքրական են մի քանի զրէադրաց մէջ
կայծի մասին եղած հետազայ տեղեկութիւնք :
Ապուսայիչայ զրէադիր մարդակազմութեան
զրքին մի օրինակին մէջ՝ ամենէն սկիզբը , կայծ
հանքի մասին հետեւեալ տեղեկութիւնն կը
կարդանք . « Կայծ , որ է եաղութն (կ'իմանայ
թրքերէն Եսգուլթի հանքն) . բարքն այն է , որ
եթէ մարդ ի բերանն առնու զծարան կտրէ ,
և թէ զոսկին հալես , ոչ գետնէն ի մէջ հա-
լած ոսկւոյն ձգես , ոչ այրի , և ոչ գոյնն աւել-
րի և ոչ պայծառութիւնն . . . » : Ուրիշ զրէադիր
ընտիր բառարանի մը մէջ կայծի բուն յատ-
կութիւնը կը նկարագրէ այսպէս . « Կայծն
գտանի ի կարգեղուն լիբէացուց , որ Ափրիկէ
կոչ . և սա ի գտանիլ ոչ ի աւելնջեան , այլ ի
դիշերի , և հեռառտանէ փայլեալ ըստ նմանու-
թեան դամբարի , երբեմն իրեւն զկայծ լուցանի ,
և երբեմն անցանէ . բայց որ ունի զսա չէ հնար
թաղուցանել . զի թէպէտ բազում հանդերձիւք
ծածկէ , նշուլ փայլատականցն արտաքս երեւի » :
Կայծի յատկութիւնը նշոյնպէս կը նկարագրեն
թէ մեր հին հեղինակք և թէ եւրոպացիք : Եւ
մեր մի քանի վերջնադարեան մատենագիրք
կայծի թրք . բառն Եսգուլթ կը կարծեն բայց
հիշելն մեր վերը իշխած Շէպէրաղ բառն կը
համարինք :

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆ

ԱՍՏՐԱԽԱՆ , ԱՍՏԵՐԽԱՆ կամ ՀԱՆ-
ՏԱՐԱԽԱՆ . ԳՂ. ASTRACHAN. Ռ. Астрахань .

— Գիւտաւոր բաղաք Ռուսիոյ Համանուն կու
սակալութեան . Վոլկա գետոյն բերնէն հե-
ռու է գրեթէ 45 հազարամետր և կառու-
ցուած է նոյն գետոյն ճիւղերէն ձևացած լըղղ-
ւոյ մը վրայ : Եթէ պատմութեան վրայ այդ
դարձնենք , սիսի տեսնենք որ Աստրախա-
նի նահանգը ենթակայ եղած է բազմադի-



Աստրախամի Հայոց Ս . Աստուածածնի եկեղեցին :

մի անցքերու և պատմական մեծ դեր կա-
տարած , ծառայելով իբրեւ դռն և ճանա-
պարհ Եւրոպա գաղթող նախկին ցեղերու : Ոչ
սակաւ արագ արագ իրարու յաջորդող վայ-
րենի թափառականներ այս երկրի մէջ առ
ժամանակ մի բնակութիւն հաստատած են ,
և ապա կոխ մղելով իրարու դէմ տկարն զո-
րաւորին տեղի տալով փախեր է : Այդ